«Հաստատում եմ»
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի տնօրեն, պատմական
գիտությունների դոկտոր
Ա. Ա. Բոբոխյան

ԿԱՐԾԻՔ

Հայկ Աշոտի Սմբատյանի՝ «Սոցիալական մոբիլիզացումը Ղարաբաղյան կոնֆլիկտի համատեքստում. խմբային և կառուցվածքային գործոնների սոցիոլոգիական հայեցակարգում» ԻԲ 00.01 «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսության մասին:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի 2026 թվականի հունվարի 8-ին կայացած նիստում (արձանագրություն N01): Քննարկմանը մասնակցել են բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր Միհրան Գալստյանը, գիտաշխատողներ՝ սոցիոլոգիական գիտությունների թեկնածու Սամսոն Մխիթարյանը, պատմական գիտությունների թեկնածու Գարիկ Աթանեսյանը, պատմական գիտությունների թեկնածու Գայանե Հակոբյանը և պատմական գիտությունների թեկնածու Ռուբեն Օհանջանյանը:

Ատենախոսության թեման առնչվում է ձգձգված և անհաղթահարելի կոնֆլիկտների պայմաններում սոցիալական մոբիլիզացման ծագման դրդապատճառների, ձևերի և վերափոխումների խնդրին՝ կենտրոնանալով Ղարաբաղյան կոնֆլիկտի սոցիալական դինամիկայի վրա: Այս թեման գիտականորեն կարևոր է, քանի որ թույլ է տալիս միևնույն կոնֆլիկտի տարբեր փուլերում բացատրել՝ ինչպես են անհատական շարժառիթները, խմբային գործընթացներն ու կառուցվածքային անհավասարությունները փոխազդում և

ձևավորում մոբիլիզացման տրամաբանությունը՝ ապահովելով թեմայի ինչպես տեսական, այնպես էլ հանրային-քաղաքական ընկալելիություն: Աշխատանքը բարձր մեթոդաբանական նորարարական արժեք ունի:

Հետազոտության ծրագրում պահպանվել են պահանջվող բաղադրիչները, այդ թվում՝ հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը, խնդիրները, մեթոդները: Ատենախոսության նպատակադրումների շարքում առանձնապես ուշադրության արժանի են՝ (ա) Ղարաբաղյան կոնֆլիկտի համատեքստում սոցիալական մոբիլիզացման դինամիկայի նկարագրությունը տարբեր փուլերում, (բ) մոբիլիզացիոն գործընթացների բազմամակարդակ մեկնաբանումը՝ ներառելով քաղաքական/սոցիալ-տնտեսական, խմբային և արժեքային գործոնները, և (գ) կոնֆլիկտ-մոբիլիզացում կապի բազմաշերտ հայեցակարգային համակարգումը:

Աշխատանքը բնութագրվում է մեթոդաբանական կուռ համադրականությամբ. կիրառվել են որակական խորքային և նարատիվ հարցազրույցներ, ինչպես նաև փաստաթղթային/արխիվային և մեդիա նյութերի լայն շրջանակի վերլուծություն՝ մոտավորապես 120 աղբյուրների ընդգրկմամբ, կիրառվել է գործընթացների հետքավորման վերլուծական մոտեցումը:

Բարձր գնահատելով կատարված աշխատանքը՝ միաժամանակ ունենք մի քանի նկատառումներ և առաջարկություններ, որոնք հետագայում կնպաստեն աշխատանքի լավարկմանը.

- Մոբիլիզացման տարբեր փուլերում «միկրո» դրդապատճառների և «մակրո» գործոնների փոխազդեցության չափելիացման համար ցանկալի կլիներ առաջարկել ավելի հստակ օպերացիոնալացման հնարավորություններ՝ հատկապես համեմատելի վերլուծությունների համար:
- Թեմատիկ առումով օգտակար կարող է լինել սոցիալական խմբերի միջև տարբերակված փորձառությունների ընդգծումը (օրինակ՝ սեռային, սերնդային և այլն)՝ որպես հետագա հետազոտական ուղղություն:
- Մեթոդաբանական առումով, աշխատանքի ուժեղ որակական հենքը կարելի է լրացնել նաև նպատակային փորձագիտական քննարկումներով, ֆոկուս խմբերով կամ

փոքրածավալ հարցումներով՝ այն հատվածներում, որտեղ պահանջվում է մոբիլիզացման հանրային տարածվածության ավելի կոնկրետ ու «չափելի» պատկեր:

- Տեքստի ոճական մակարդակում որոշ տեղերում ցանկալի կլիներ առավել համառոտ և ընթերցելի շարադասություն՝ հատկապես մասնագիտական հասկացություններով խիտ կառուցված նախադասությունների դեպքում:

Ներկայացված նկատառումները որևէ կերպ չեն ստվերում ատենախոսական աշխատանքի գիտական արժեքը, և դրանք առաջարկություններ են հեղինակի հետագա հետազոտական աշխատանքների համար:

Ստացված արդյունքներն ունեն գիտական, այդ թվում՝ տեսական, մեթոդաբանական և կիրառական նշանակություն ու կարող են մեծ նպաստ ունենալ ապագա ճգնաժամային իրավիճակներում կամ խաղաղաշինական գործընթացներում պետական ու համայնքային քաղաքականությունների ու ռազմավարությունների մշակման գործում: Աշխատանքում վեր հանված ու վերլուծված մոբիլիզացման սոցիալական դրսևորումներն ու ներքևից վերև քաղաքացիական նախաձեռնությունների պոտենցիալը էական նշանակություն կարող են ունանալ ՀՀ հետագա զարգացման տեսլականում:

Հետազոտության արդյունքները ներուժ ունեն խորացնելու կոնֆլիկտի, տրավմայի, հիշողության ու սոցիալական մոբիլիզացման վերաբերյալ սոցիոլոգիական, ազգագրական ու մարդաբանական ակադեմիական գրականությունն ու խթանեն հետագա հետազոտությունները՝ Արցախի հայաթափման, փախստականների ադապտացիայի ու հետպատերազմական խաղաղության գործընթացի պայմաններում:

Ատենախոսի հրատարակած գիտական աշխատանքներն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները: Սեղմագիրն ամփոփում է աշխատանքի հիմնական բովանդակությունը՝ ներառելով հեղինակի հիմնական ձեռքբերումները:

Եզրակացություն

Հայկ Աշոտի Սմբատյանի՝ «Սոցիալական մոբիլիզացումը Ղարաբաղյան կոնֆլիկտի համատեքստում. խմբային և կառուցվածքային գործոնների սոցիոլոգիական հայեցակարգում» ԻԲ 00.01 մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը ավարտուն գիտահետազոտական աշխատանք է, ունի շատ կարևոր տեսամեթոդաբանական և գործնական նշանակություն, և

եզրահանգումները կարող են գիտական հիմք հանդիսանալ սոցիալական մոբիլիզացման ավելի խորը ուսումնասիրությունների համար:

Թեկնածուական ատենախոսությունը բավարարում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» պահանջները, ուստի միջնորդում ենք Մասնագիտական խորհրդին Հայկ Աշոտի Սմբատյանին շնորհել սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ԻԲ 00.01 «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի
սոցիալական գործընթացների և ինստիտուտների
մարդաբանության բաժնի վարիչ,
պատմական գիտությունների դոկտոր
Միհրան Վարդգեսի Գալստյան

21.01.2026